ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Հայրապետը Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Սեպտեմբեր 24 թուակիր իր գրութեամբ դիմել է Կաթողիկէ Եկեղեցու Թանգնոյապետ Նորին Սրբութիւն Տ. Տ. Պաւղոս Զ. Պապին, Համայն Ռուսիոյ Պատրիարք Ն. Սրբութիւն Տ. Տ. Ալէքսիին, Բենտերբերիի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհութիւն Դոկտ. Մայքլ Ռամզէին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Ընդհանուր Քարտուղար Հայր Դոկտ. Վիզեր Հուֆտին, հրաւիրելով Քրիստոնեական Բոլոր Եկեղեցիները, որպէսզի յառաջիկայ տարի Ապրիլի 24ին մասնակցեն Հայ Եկեղեցու եւ ժողովրդի մեծ սուգին, տօնելով մօտ երկու միլիոն հայերի հոգւոց համար, որոնք նահատակուեցին Արեւմտեան Հայաստանում, առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

ԳԻՒԱՆ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

24 Սեպտեմբեր 1964

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ
ՀՐԱՒԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը պատիւ ունի հրաւիրելու Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 51րդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուի Շաբաթ օր, 5 Դեկտեմբեր 1964, առաւօտեան ժամը 9.30ին, Մրուբեան Կեդրոնական Դրասենեակին մէջ, 250 Ֆիֆթհ Էվընիու, Նիւ Եորք, Ն. Ե.:

Եթէ օրինական մեծամասնութիւն մը ներկայ չըլլայ վերոյիշեալ բաւականին, այս ծանուցումը պիտի նկատուի իբրեւ երկրորդ հրաւէր Ընդհանուր Ժողովի, որ պիտի գումարուի Շաբաթ եւ Կիրակի, 12 եւ 13 Դեկտեմբեր 1964, առաւօտեան ժամը 9.30ին, Սթեյլը Հիլթըն պանդոկին մէջ, Սեվընթ Էվընիու եւ 33րդ Փոյոց, Նիւ Եորք 1, Ն. Ե.:

Այն բոլոր իրաւասու անդամները որ ներկայ պիտի ըլլան այս ժողովին, օրինական մեծամասնութիւն պիտի կազմեն:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ընդհանուր Տեղեկագիր 1963 Տարեշրջանի:
2. Ընդհանուր Հաշուետուութիւն 1963 Տարեշրջանի:
3. Ընտրութիւն Կեդր. Վարչ. Ժողովի՝ իրենց պաշտօնավարութեան երկնք ուարտած անդամներու տեղ:
4. Կանոնագրի Փոփոխութիւններ:
5. Առաջարկներ եւ Թելադրութիւններ:
6. Գնահատանքի Բանաձեւեր:

Ի ԴԻՄԱՑ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Ատենապետ — Ատենադպիր

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ — Մ. Մ. ՅՈՎՍԷՓԵԱՆ

Նիւ Եորք, 1 Սեպտ. 1964

digitised by A.R.A.R.@